# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<18>> Մարտի 2025թ. N ՄՈ/422-Ա

ք. Արմավիր

**«ԷՋՄԻԱԾՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳՈՌ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 163-րդ, 164-րդ հոդվածներով և 169-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N129-Ն որոշման N2 հավելվածի 5.6-րդ կետով, հիմք ընդունելով «Էջմիածնի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գոռ Ասատրյանի 2025 թվականի մարտի 18-ի դիմումը

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Էջմիածնի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գոռ Ասատրյանին տրամադրել 2022-2023 թվականների աշխատանքային տարվա տեղափոխված արձակուրդի մասը՝ 2025 թվականի մարտի 20-ից 24-ը ներառյալ՝ 3 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գոռ Ասատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Էջմիածնի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի բուժական գծով տեղակալ Արթուր Հարությունյանին:
3. Գոռ Ասատրյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի մարտի 25-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2025-03-19 11:30:59 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից